ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 119-Ա

«29» մարտի 2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 19-րդ կետի 18-րդ ենթակետի պահանջը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 7 հավելվածի:

2. Դադարեցնել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության՝ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի և տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գործունեությունը.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ու մշակույթի և սպորտի բաժնի գործունեությունը.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի և բնապահպանության բաժնի գործունեությունը:

29.03.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 118-Ա

«29» մարտի 2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 19-րդ կետի 18-րդ ենթակետի պահանջը

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գործունեությունը:

29.03.2023

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 117-Ա «29» մարտի 2023թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2066-Ն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետը

որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի հունիսի 2-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 60 որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի ապրիլի 7-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 48 որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 109-Ա որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի մայիսի 12-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 56 որոշումը.

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 54/1 որոշումը.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի ապրիլի 26-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 54/1 որոշումը.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի ապրիլի 7-ի թիվ 50 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 461-Ա որոշումը.

8) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի փետրվարի 19-ի «Մարզպետարանի բաժինների կանոնադրությունները հաստատելու մասին» N 30-Ա որոշումը.

9) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2003 թվականի ապրիլի 7-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 47 որոշումը.

10) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 214-Ա որոշումը.

11) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 150-Ա որոշումը.

12) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի օգոստոսի 27-ի N 452-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 140-Ա որոշումը.

13) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 45-Ա որոշումը:

29.03.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ